Պարույր Սևակ

Անտարբերության թշնամի

Ինչ որ անում եմ՝
Կրքով եմ անում,
Անում եմ թափով,
Եռանդով ամբողջ՝
Վատնելով ավյուն,
Ծախսելով արյուն,-
Անտարբերության թշնամին եմ ես,
Անհա՛շտ-անզիջո՛ւմ-մոլի՛ ոսոխը:
Բայց երբ աշխարհի բյո՛ւր գոտիներից
Աշխարհ է հաշվվում լոկ երկու բևեռ,
Բայց երբ աշխարհի բյո՛ւր երանգներից
Աշխատում են լոկ սևն ու ճերմակը,
Բայց երբ աշխարհի բոլո՛ր բառերից
Երկուսն են խոսում՝ լոկ «ոչ»-ն ու «այո»-ն,
Ջերմաստիճանը - անզոր զայրույթից -
Հասնում է նույնիսկ քառասունմեկի,
Ցավը դառնում է կեղեքիչ մրմուռ,
Ու ես՝ թշնամի՛ս անտարբերության,
Անտարբերության ոսո՛խը մոլի,
երևակայե՛ք,
Գերադասում եմ... մնալ ձեռնըպահ:

Սակայն այնպե՞ս եմ մնում ձեռընպահ,
Որ պերճախոս է «չէ»-ից ու «հա»-ից...